

ԽԵԼՈՔՆ ՈՒ ՀԻՄԱՐԸ

Երկու ախաղեր են լինում. մինը՝ խելոք, մյուսը՝ հիմար: Խելոք ախաղերը միշտ բանեցնում ու չարչարում է հիմարին; Էնքան չարչարում է, որ հիմարը հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, թե՝

— Ախաղեր, էլ չեմ ուզում քեզ հետ կենամ, բաժանվում եմ, իմ բաժինը տուր, գնամ ջոկ ապրեմ:

— Լա՛վ,— ասում է խելոքը,— ևսօր էլ դու ապրանքը ջուրը տար, ես կերը տամ, երբ ջրից բերես, որ ապրանքը գոմը մտնի՝ ինձ, որը դուրսը մնա՝ քեզ:

Ժամանակն էլ լինում է ձմեռ:

Հիմարը համաձայնում է: Ապրանքը ջուրն է տանում, ետ բերում:

Չմեռվա ցուրտ օ՛ր, մրած անասուններ. հենց տար գոմի դուռն են հասնում թե չէ՝ իրար ետևից ներս են թափում: Դուանը մնում է մի հիվանդ քոստ մողի՝ գերաններին քոր անելիս: Են է մնում հիմարին:

Ես հիմարը թոկը վիզն է կապում, իր մողին տանում ծախելու:

— Ա՛ մողի, արի, հե՛յ,— կանչելով գնում է:

Մի հին ավերակի մոտից անցնելիս էլ որ ձեն է տալի՝ ա՛ մողի, արի, հե՛յ..., ավերակի արձագանքը կրկնում է.

— Հե՛յ...

Հիմարը կանգնում է:

— Ինձ հետ ես խոսում, հա՞...

Ավերակը ձայն է տալի.

— Հա՞...

— Մողին ուզում ե՞ս:

— Ե՞ս... — Քանի՝ մանեթ կտաս:

— Տա՞ս...

— Հիմի կտա՞ս, թե՞ չէ:

— Չէ՞...

— Դե էգուց կզամ, որտեղից որ է՝ ճարի՞...

— Արի՞...

Հիմարը համաձայնում է ու մողին ծախված համարելով՝ ավերակի դռանը կապում է, շվշվացնելով վերադառնում տուն:

Սյուս օրը առավոտը վաղ վեր է կենում, գնում փողերն առնելու: Դու մի՛ ասիլ՝ գիշերը գայլերը մողին կերել են: Գնում է տեսնում՝ ոսկորները դեսուդեն ցրված ավերակի առջև:

— Հը՞՝ ասում է, — մորթել ես, կերել, հա՞:

— Հա՞...

— Չաղ է՞ր, թե՞ չէ:

— Չէ՞:

Հիմարը էստեղ վախենում է, կարծում է՝ ավերակի մտքումը կա, որ իր փողը չտա:

— Եղ իմ բանը չի,— ասում է,— առել ես, պրծել, ես իմ փողի տերն եմ, բեր իմ փողը՝ տասը մանեթ դեղին ոսկի՝ ...

— Ավի՝ ...

Ես կ որ լսում է հիմարը, բարկանում է, ձեռի փետը ետ է տանում, տուր թե կտաս ավերակի խարիսուլ պատերին: Մին, երկու զարկում է. պատերից մի քանի քար են վեր ընկնում: Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում գանձ է եղել պահած: Քարերը որ վեր են ընկնում՝ ոսկին թափում է հանկարծ առաջը, լցվում:

— Այ եղաքես... բայց էսքանն ի՞նչ եմ անում, տասը մանեթ ես պարտ՝ իմ տասը մանեթը տուր, մնացածը քու փողն է, ընչի՞ս է պետք...

Մի ոսկի է վերցնում, զալի տուն:

— Հը՝, մոզիդ ծախեցի՞ր,— ծիծաղելով հարցնում է խելոք ախապերը:

— Ծախեցի:

— Ω և մը վրա:

— Ավերակի:

— Հետո՝, փող տվա՞վ:

— Իհարկե, տվավ: Դեռ չեր ուզում տա, ամա ձեռիս փետովը որ մի քանի հասցրի, ինչ ունեթ՝ առաջիս փոեց: Իմ տասը մանեթը վեր կալա, մնացածն իրենն էր, հենց թողեցի էնպես փոված:

Ասում է ու ոսկին հանում, ցույց տալի:

— Էղ ո՞րտեղ է,— աշքերը չորս է անում խելոք ախապերը:

— Է՞հ, ցույց չեմ տալ, դու աշքածակ ես, էնքան կհավաքես, շալակս կտաս, որ մեջքս կկոտրի:

Խելոքը երդվում է, որ մենակ ինքը կշալակի, միայն թե տեղը ցույց տա:

— Բեր,— ասում է,— ձեռինդ էլ ինձ տուր, մնացածի տեղն էլ ցույց տուր, որ տեսնեմ ես՝ տկլոր ես, քեզ համար նոր շորեր առնեմ:

Հիմարը նոր շորերի անունը որ լսում է՝ ձեռինն էլ է տալի ախապորը, տանում է, մնացածի տեղն էլ ցույց տալի: Խելոքը ոսկին հավաքում է, բերում տուն, հարստանում, բայց ախապոր համար նոր շորեր չի առնում:

Ես հիմարը ասում է, ասում է, որ տեսնում է՝ չի լինում, գնում է դատավորի մոտ գանգատ:

— Պարոն դատավոր,— ասում է,— ես մի մոզի ունեի, տարա ավերակի վրա ծախեցի...

— Հերի՞ք է, հերի՞ք,— ընդհատում է դատավորը,— ես հիմարը ո՞րտեղից եկավ, ո՞նց թե մոզին ավերակի վրա ծախեցի...— Վրեն ծիծաղում է ու դուրս անում:

Գնում է, ուրիշներին գանգատվում, նրանք էլ են վրեն ծիծաղում:

Ու, ասում են, մինչև էսօր էլ խեղճ հիմարը կիսամերկ ման է զալի, պատահողին գանգատվում, բայց ոչ ոչ չի հավատում, ամենքն էլ ծիծաղում են վրեն, ու խելոք ախապերն էլ ծիծաղում է ամենքի հետ: